ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ԵՎ ԱՆԴԱՄՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 13-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ՝ Պալատ) կանոնադրության 17.5-րդ կետի 27-րդ ենթակետի, Պալատի նախագահի 11.11.2013թ. թիվ 39-Լ որոշմամբ հաստատված և 28.07.2021. թիվ 133-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ շարադրված «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի երիտասարդական խորհրդի կանոնակարգի» 6-րդ, 7-րդ, 8-րդ և 9-րդ կետերի պահանջներով,

հաշվի առնելով, որ ժամկետը լրանալու հիմքով դադարել է Պալատի երիտասարդական խորհրդի նախագահին, ինչպես նաև խորհրդի անդամներ Հասմիկ Թադևոսյանին և Վարդուհի Սարգսյանին լիազորությունները,

նկատի ունենալով նաև 2023 թվականի ընթացքում փաստաբանի արտոնագիր ստացած փաստաբանների կազմից խորհրդի անդամների թափուր մնացած տեղերը համալրելու անհրաժեշտությունը,

նկատի ունենալով փաստաբաններ Միքայել Դանիելյանի, Դավիթ Թովմասյանի և Եղեգնի Բաբայանի համաձայնությունների առկայությունը,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի երիտասարդական խորհրդի նախագահ նշանակել փաստաբան **Միքայել Դանիելյանին** (արտոնագիր թիվ 2866)՝ մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը ժամկետով,

2. Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի երիտասարդական խորհրդի անդամներ նշանակել փաստաբան **Դավիթ Թովմասյանին** (արտոնագիր՝ թիվ 3444)՝ **և Եղեգնի Բաբայանին (արտոնագիր՝ թիվ 3463)** մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը ժամկետով:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝ Սիմոն Բաբայան

10 հունվար 2024թ.
թիվ 3-Ա
ք. Երևան